

Կանոնագրության

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆ

ԵՐ

ԱՌԱՋՆՈՐԴ ՀԱՃԱՌԱԿԱՆԱՅ



ԲՐԱՏԱՐԱԿԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ




Մի 51



ՏՊԱԳՐԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



ՀԱՆՐԱՊԵՏԱԿ

ՀԱՆՐԱՊԵՏ ՀԱՆՐԱԿԻԺԱԿ **HAHRAKIDAG**
 ՀԱՐԱԹԱԿԱՆ **JOURNAL ARMÉNIEN ENCYCLOPÉDIE**

Զ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ || ԹԻԻ Է 1 || 20 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1903

ԱՌՈՒՆԴԱՆԻՍ

Դո՛ւ մանկիկ մ'ես բոցավառ
 Աշխոյժ, սիրուն ու կայտառ,
 Բերկրա՛նք, սրտին մայրիկիդ,
 Ճրա՛գ, հոգւոյն հայրիկիդ:

Աչերդ սեաւ ունին գոյն
 Ծիծղուն ծովի մը հանգոյն,
 Ա՛յնքան աղու, գեղանի,
 Որ հոն հոգիս կ'ընկզմի:

Այդ կարմրորակ, քիւն, բերան
 Են լայելուչ, անմահ,
 Ունիս քնքոյշ գիրգ մարմին
 Դո՛ւ, ամենուս փարեւին:

Ո՞ւմ այս աչեր, լոյս մանկիկ,
 Զուարթադէմ ու փափկիկ,
 Յա՛շնորհագեղն է Գեղամ
 Որուն գովեստ կը տեղամ:

Ո՞ւմ այս տիպար, վարդ մանկիկ
 Կարծես է մի ծիծեռնիկ,
 Ծաղիկներու ունի բոյր.
 Տուէ՛ք ճակտին տա՛ք համբոյր:

Եւ այս պատկեր լուսափայլ
 Կը դիտեմ ես հոգեզմայլ,
 Դիտեմ շրթունքն կարմրալար
 Կակուղ մազերն հողմավար:

Գոչեմ, երկինք քեզ պաշտպան,
 Սիրո՛ւն գաւակ, դո՛ւ Գեղամ,
 Լո՛յս, մթագնած աչերուս,
 Հանգի՛ստ, կեանքի խոհերուս:

Ապրէ՛ Գեղա՛մ, շատ տարի,
 Միշտ հեզ եղիր ու բարի,
 Աստուծոյ մօտ ապրէ՛ ճիշդ,
 Որ չունենաս երբէք վիշտ:

Մ. ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ



ՀՐԱՊԱՐԱԿԻ ԳՐԱԳԻՐԻՆ ԳԱՂՏՆԻՔԸ

Ա.

Նանկասաքի, Բիու. Սիու կղզիին մայրաքաղաքը, փողոցները շատ լայն ու լոյս են, որովհետեւ տունները ցած, կրաների ու ձերմակ կամ սեւ կղմինտրով ծածկուած են:

Մեծ քրմարանի մօտ, հրապարակի վրայ, կարգով շարուած կը տեսնէք գոյնզգոյն հովանոցներ՝ որոնց ներքեւ նստած են շրջուն վաճառողներ:

Ամէն եկեղեցիի, բազմաթիւ, մեհեանի հրապարակի վրայ, — յեւրոպա կամ յԱսիա, — այդ հովանոցները անպակաս են: Հոս կանաչ, հոն կարմիր կերպասէ, աստ գունաւոր թուղթէ եւ անդ չեմ գիտեր ինչէ: Գոյնը կամ տեսակը կրնայ տարբերիլ, բայց այդ աղօթավայրերէ անբաժան է հովանոցաւոր վաճառականը:

Պուտտաի մեհեանի մը մօտ հաստատուած էին մի շատ համեստ վաճառողներ, որոց մէջ կը գտնուէր նաեւ ծերունի գրագիր մը:

Ճաբոնի պէս երկիրի մը մէջ՝ ուր ամէն ոք գօտիին կաղամար մը անցուցած դուրս կ'ելլէ, այս արհեստը շատ շահաւոր չի կըրնար ըլլալ: Ու երբ կըթուլնեն պարտաւորիչ ըլլայ, ինչ որ չի կրնար ուշանալ, հրապարակի գրագիրը, քաղաքակրթեալ երկիրներու նման, պարզ ընդօրինակող մը պիտի դառնայ:

Առ այժմ, հրապարակի գրագիրի յաճախորդներն են տգէտները ու երկչոտները. իր գրիչն ու ոճը պէտք է որ յաճախորդին կամքին համաձայնեցնէ, ամէն բան հասկնայ ու ամէն բան մոռնայ:

Ընտանիք մը ծերունի գրագիրին մօտեցաւ: Համեստ վիճակի տէր ընտանիք մ'էր, ութ տարեկան աղջիկ մը, մօրը կռնակը պառկած մանկիկ մը ու տասը տարեկանի մանչ մը՝ որ քիչ մը հեռուն կը կենար: Կինը մօտեցաւ դժբաղդութեան յատկանիչն եղող երկչոտ կերպարանքով: Երիտասարդ ու սիրուն էր. բնութեան լիարուռն պարգեւները՝ մանր ոտներ, նուրբ ձեռներ, մեծ աչեր, առատ մազեր. մարգարտանման ակռաներ, հակասութիւն

մը կը կազմէին իր հին հագուստին ու խոտէ նըբանով կեղաին (կօշիկ) հետ:

Ծերունի գրագիրը իր յաճախորդին համար մեծ համակրութիւն մը զգաց, քովը նստեցուց, եւ որովհետեւ կինը կ'ուզէր որ փոքր բան մը վճարելով՝ երկայն նամակ մը գրել տայ՝ ուստի իր պատմութիւնը անկեղծօրէն պատմեց. անունը Վարդուհի էր, երկու տարի առաջ ամուսնացեր էր Բէ-Հիւանի, ազնուական Լի-Ֆիւ-Չիուի քով ծառայող երիտասարդի մը հետ:

— Լի-Ֆիւ-Չիու, Թաիզունի սիրելի՞ն, Այս անունը լսելով գրագիրին արաեւանունքները սկսան ուժգին իրարու զարնուիլ, Բայց Վարդուհի չի նշմարեց:

Կ'ըսէր թէ իրենց երջանկութիւնը անամպ եղած էր, որովհետեւ կ'ամփոփուէր միակ բառի մը մէջ՝ այն է գորով... բայց, աւա՛ղ. արբանեակները պէտք է որ սոլորակներու ուղեկից ըլլան: Լի-Ֆիւ-Չիու Անգղիոյ ճարտնական դեսպան անուանուեցաւ: Բէ-Հիւան ստիպուեցաւ մեկնիլ դէպ հեռաւոր երկիր մը որոյ գոյութիւնն ցայն վայր Վարդուհիի անծանօթ էր:

Մեկնիլ. սիրտ յօշոտող բառ մը՝ որ կը պարունակէր այնքան դառնութիւն, որքան գորով բառն՝ ուրախութիւն:

Վարդուհի իր նորածին զաւկին հետ մնաց, իր տնակը ձգեցով՝ գնաց մօրը սուներ՝ որ անչափահաս երկու զաւակներ ևս ունէր. մանկամարդ կինը այս ըսելով՝ իր հետ եղող փոքր աղջիկը ու մանջը մատնանիչ կ'ընէր: Ուրիշ դժբաղդութիւն մ'ալ, Բէ-Հիւանի երթալէ ամիս մը վերջը մայրը յանկարծամահ եղաւ...

Այն ատեն, Վարդուհի առաւել քան երբեք գիացաւ տխրութեան ու արտասուքի ի՞նչ ըլլալը: Փոքր ընտանիքի մը գլուխը կը գտնուէր, — աւելորդ է ըսել թէ՝ քոյրը ու եղբայրը որդեգրեր էր, — գրեթէ աւանց ապրուստի, որովհետեւ հիւանդութիւնն ու մահը, մինչեւ իսկ ի ճարտն, սուղի կը նստին... Ամուսնոյն թողած մի քանի ոսկին ծախսուեր էր... Բացակայ եղողին վրայ առանց լուրի, առանց վշտակցութեան բառի մը ապրիլը, թշուառութեան վրայ լքում, վհատութեան վրայ տըխրութիւն կ'աւելցնէր... Բայց երկինք կը սկսէր պայծառանալ:

Բէ-Հիւան վերջապէս նամակ մը ղրկեր էր, մխիթարիչ աւետաբեր: Ահա այդ երկայն նամակն էր որ Վարդուհի գրագիրին կարդացնիլ եւ պատասխանը գրել տալ կը փափաքէր:

Դեռատի կինը ծերունիին տուաւ թուղթ մը՝ զոր յուզեալ ձայնով մը կարդալ սկսաւ, մինչդեռ Վարդուհի աչքերը կիսովին

կը գոցէր որպէսզի աւելի լաւ լսէ ու ըմբռնէ :

— Ամբողջ նամակը Լի-Ֆիւ-Չիու իշխանի ձեռագիրն է . մըր-մըռաց գրագիրը ուրախութեամբ մը՝ զոր չի կրցաւ զսպել :

— Ըսել է Նորին Վսեմութեան գիրը կը ճանչնա՞ք :

— Սյսինքն... մենք՝ հրապարակի գրագիրքս այնքան վար-չական թուղթեր կը կարդանք որ գիրերէ ոմանք մեր ուշը կը դրաւէ . . . ու հոս անջինջ կը մնայ . . . :

Ճարոնցին ձեռքը մեքենաբար՝ դէպ ի սիրտը կը տանէր , բայց ուշաբերելով՝ ճակտին տարաւ :

Բաց աստի , վարդուհի կարեւորութիւն չէր տար ծերունիի յուզման , ամուսնոյն իրեն գրածը իմանալու այնքան անհամ-բեր էր :

— « Պաշտելի կինս , սկսաւ ծերունին , ոիրեցեալ վարդու-հիս , եթէ կարենայի երեւակայել թէ աշխարհ այսքան ընդար-ձակ է ու Անգլիա ալ աշխարհիս միւս ծայրը կը գտնուի . . . բարի տէրոջս կ'աղաչէի որ զիս քովդ ձգէ » :

Նա-Հիօ , ծերունի գրագիրը , երկու անգամ կարդաց այդ մը-խիթարիչ թուղթն : Ամուսինը կը նկարագրէր « քաղաքակրթեալ » քաղաքներու միտքինակ կեանքը եւ իր սիրելի կինը կ'ապահովցնէր թէ՛ ո՛չ մի երկիր կրնար Ճարոնի հետ բաղդատուիլ :

« Մենէ շատ բարձր ենթադրեալ այս ժողովրդոց իմացակա-նութեան վրայ քեզի գաղափար մը տալու համար , կը գրէր , ստչափ ըսեմ թէ՛ մեզի ամէնքս ալ ապուշ պառաւ կիներու տեղ դրած են . ու այս ալ դա սքանչելի պատճառին համար որ մա-զերնիս երկայն է ու մօրուք չունինք . լայն բանթալօն եւ ո՛չ թէ նեղ կը հագնինք : Այնպէս մը կը դիտեն մեզի որ կարծես թէ հետաքրքրաշարժ կենդանիներ ենք , ու աննշմարելի անցնելու համար պէտք է որ Անգլիացիներու տիտուր դէմքերնին ու սոս-կալի հագուստները կրենք , մազերնիս ու ազգութիւննիս պահենք » :

Նամակին ներփակեալ պանքտոմա մը ա՛լ աւելի անուշութիւն մը տուաւ այս սիրելի թուղթի ընդունելութեան :

Վարդուհի անոր պատասխանել կ'ուզէր : Իմաստասիրական մտածումներն իր գործը չէին : Նա-Հիօի աղաչեց որ ամուսինին վեկնելէն յետոյ տեղի ունեցած դէպքերը պատմէ , եւ իր գորովը վեհանձնութեան նոր թափ մը քաղելով՝ կ'աղաչէր որ գոնէ համ-

բերատար բլլայ ու նանկասաքի վերադառնալու համար տիրոջը կամքն ըլլալուն սպասէ:

Բայց մինչ մանկամարդ կինը տուն կուտար, բարեսիրտ ծերունին ուղակի Լի-Ֆիւ-Չիուի կը գրէր եւ ինքզինքը կը յիշեցնէր: Այս բանս երբէք չպիտի ընէր եթէ տարաբաղդ Վարդուհիի օգնելու տենչ մը չզգար:

Նորին Վսեմութիւնն արդեօք կը յիշէ՞ Նա-Հիօն, իր նախկին դաստիարակն որ իրեն տալը տարի գրագիտութիւն դասախօսած էր:

Անկէ ի վեր շատ տարիներ անցեր էին, աշակերտը, Դաիքունի սիրելին եղեր էր ու ծերունի դաստիարակը մոռցեր էր: Արդէն մեհեանի հրապարակէ անցած ատեն այս հասարակաց ողորմուկ գրագրի, ծախող բաղդի այս վիճակի մէջ՝ ի՞նչպէս ճանչնար հաւատարիմ դաստիարակն, որու հպարտութիւնը չէր թողուր որ իր թշուառութեան գաղտնիքը ուրիշներուն յայտնէ:

Իսկ հիմա եթէ կը խօսէր, իրեն համար չէր, անցեալ տարիները կը յիշեցնէր մի միայն Լի-Ֆիւ-Չիուի աղերս մը ուղղելու համար. Բէ-Հիւան սպասաւորն դժբաղդ էր հոն. Հո՛ւս, անոր կինն ալ աւելի դժբաղդ էր: Ինչո՞ւ իրարմէ զատել այս սիրող հոգիները: Ինչո՞ւ երջանկութեան օրեր ջնջել՝ կեանքէն երկու էակներու, որոնք թերեւս, շատ տարիներ կենակից չպիտի կրնային ըլլալ:

Նա-Հիօ կը ճանչնար անոր գթած սիրտը: Ահա այդ բարեսրտ-տութենէ քաջալերուած՝ ծերունի դաստիարակն, իր աշակերտին ազաչանք մը կ'ուղղէր: Երկու ամիսէն ձմեռնային արեւադարձի հետ Ամուսնացեալներու տօնը կուգար, տօն մը որ ամէն ամուսին ներկայ գտնուիլ կ'ուզէ, եւ որ երբեմն գործի պատճառաւ Ճաբոնի կայսրութեան միւս ծայրը գտնուող ամուսինն ընտանեկան յարկը կը դարձնէ. ամէն մեհեանի մէջ չքեղութեամբ կատարուող ամուսնական տօն մը՝ յորում ամբողջ քաղաքը կը լուսավառուէր եւ ամուսնացեալներու բնակարաններն մեծ ուրախութեան մէջ կ'ըլլար...: Երկու ամիսէն, Բէ-Հիւան պիտի բաղխէ՞ր Վարդուհիի բնակարանին դուռը՝ որ այդքան շուտ վերադարձ մը բնաւ չի յուսար: Վարդուհի՝ առանց կասկածելու պատուական Նա-Հիօի իրեն լարած հայրական խաղի վրայ՝ առաւ նամակն՝ զոր կը կարծէր թէ իրեն տուն տուածն էր, ծերուկ գրագրին փոքր բան մը վճարեց, անուշ խօսքերով շնորհակալ եղաւ ու հեռացաւ: Մերունին ժամանակ մը զանի չտեսաւ:

Յայտնի է որ Ճաբոնցիք շաբթուան մէջ հանգստի օր չունին, եթէ քրիստոնեաներու Աստուածն ամէն եօթն օրը մէկ օր հան-

գիտաւ ընել պարտք կը դնէ, Պուատա կը բաւականանայ իրարմէ հեռու մաքսութիւններ կամ պարտաւորիչ տօներ տալով:

Ճարտնական կրօնքը վեց մեծ տօներ ունի. 1. Ամաճօրի տօնը, (Յունուար 20ին, կաղանդչէքներով, որոնք ընդհանրապէս հող-մահարներ ու չոր ձուկեր կը նուիրեն իրարու.) 2. Մանկանց տօնը: 3. Դրօշներու տօն, երիտասարդներու տօն: 4. Լապսեներու տօն, որ կը կատարուի ի պատիւ ամուսնացած անձերու: 5. Ոսկեծաղկի տօն, յորում յիշեալ սիրուն ծաղկի գունագեղ թերթերը փրցնելով տուններու սեմերուն վրայ կը սփռեն: 6. Ամուսիններու տօն, որու կ'ակնարկէր ծերունի գրագիրն եւ որ ամուսիններու առիթը կուտայ գովեստի արժանի գորով մը յայտնելու: Այդ օրն, ո՛չ մի պատրուակով ամուսնական յարկէ հեռի կը գտնուին:

Գ.

Համակրութիւնը գացող ու ետ դարձող հոսանքով ելեքտրական թել մ'է, պիտի ըսէ քսաներորդ դարու իմաստասէր մը: Այն համակրութիւնը՝ որ հրապարակի խեղճ գրագրի սիրտն գրաւեր էր Վարդուհի իրեն մօտեցած ատեն, նոյն այդ համակրութենէ անմասն չէր գտնուէր նաեւ մանկամարդ կնոջ սիրտն ալ:

Նամակը ճամբայ ելած էր. պատասխանը դեռ չէր կրնար առած ըլլալ, եւ սակայն, Վարդուհի՝ տղոց հետ աղօթատեղիէ դուրս ելած ատեն՝ ծերունի Նա-Հիօի քովէ անցաւ: Իրեն այնպէս կուգար որ այդ բարի մարդն՝ որուն բացեր էր սիրտն այնքան անկեղծութեամբ՝ ալ ընտանիքէն կը համարուէր: Քովը նրստելով վայրկեան մը խօսեցաւ բացակային վրայ, Ծերունին զինք այնչափ լաւ ընդունեց որ՝ Վարդուհի կարդացնել կամ գրել առլիք նամակի մը սպասելով հանդերձ՝ յաճախ իր ծերունի բարեկամը տեսնելու կ'երթար:

Զմեռնային արեւադարձը կը մօտենար: Ծերունի գրագիրը մտատանջ կ'երեւէր, իր աղերսագրին պատասխան մը չէր եկեր: Նա-Հիօ կամաց կամաց կը խոստովանէր թէ՛ շատ յանդուգն գրտնուած էր. միթէ Լի-Ֆիւ-Չիու իր դաստիարակը կրնա՞ր յիշել: Տղոց բարեկամութիւնը գարնան ընծիւղին կը նմանի, քնքոյշ ու յուսատու՝ երբ փոքր են, բայց աշնան կը չորնան կ'իյնան: Հպարտութիւնը զինքը ազնուական աշակերտէն հեռու պահած էր քանի որ իր արդէն փոքր հարստութիւնը ծախող չահագիտութեանց մէջ փճացեր էր: Երբէք իր աշակերտին աղաչանք մը չի պիտի ուղղեր: Ինքը, ամուրի ու առանց ընտանիքի անձ մը, իր

պէտքերը կրնար հոգալ. այդ պէտքերն ալ արդէն շատ սահմանափակ էին: Եթէ մեզի ծանօթ եղող վարպետութեան ալ դիմեց՝ պատճառը Վարդուհիի վիշտն ու մեկուսացեալ վիճակն է որ զինքը վերջին աստիճան կը յուզէր: Ծեր, աղքատ ու անոք ըլլալով՝ հըրտպարակի գրագիրը կատարելապէս կը հասկնար այդ կացութիւնը:

Քանի տօնը կը մօտենար, մանկամարդ կնոջ տխրութիւնն ու վհատութիւնն ալ այնքան կ'աւելնար, եւ ծերունին զանի մխիթարելու համար խօսք մը չէր կրնար գտնել: Վերջին յոյսերու ի դերեւ ելլելն շատ դառն է. ատոնք երջանկութեան վերջին փամփուշտներն են՝ որոնք ծուխ կը դառնան:

Մեծ օրն եկաւ: Ամէն տուն բազմագոյն լապտերներու շրջանակի մը մէջ առնուած էր, միայն բացակայ ամուսնի տունն մերկ ու տխուր կը մնար:

Երեկոյեան դէմ. Նա-Հիօ Վարդուհիի դուռը զարկաւ. անոր եղբոր նուէր կը բերէր սամգէն մը (տեսակ մը փոքր կիթառ), իր երբեմնի ճոխութենէ միայն այդ մնացեր էր:

— Շնորհակալ եմ, բարեկամս, որ այսօր ինծի չմոռցար, ըսաւ Վարդուհի: Մինչեւ երեկոյ լացի. տկարութիւն ըսէ՛, բայց ձեռքս չէ: Երբ կը տեսնեմ որ ամէն կին իր ամուսնի ներկայութեամբ ուրախ է, չեմ կրնար առանց վշտի մտածել թէ իմ հեռուն, շատ հեռուն է: Շիտակը կ'ուզէք, յարեց Վարդուհի ծերունիին ձեռքը բռնելով, հաշուեցի թէ ութ շաբաթ առաջ գրած նամակնուս մէջ եթէ Բէ-Հիւանի աղաչէինք որ այս տօնին ներկայ գտնուի, Ժամանակին պիտի կրնար ձեռքն հասնիլ... բայց այդ բանը յիմարութիւն կ'ըլլար. քահանայքի մը համար այդքան երկայն ճամբորդութիւն մը ընել... բան մը չըսելովս աղէկ ըրի... այնպէս չէ՞:

Վարդուհի նայուածքով Նա-Հիօն կը հարցափորձէր, մինչդեռ նա գլուխը կախ ու ընկճեալ կը կենար: Կրնա՞ր խոստովանիլ թէ՛ ինքը գրած էր, այլ ի զուր:

Ծերունին իր սրտէն մի քանի մխիթարական խօսքեր պիտի հանէր, երբ մէկէն դուռը բացուեցաւ, ու Վարդուհիի փոքր քոյրը ներս մտաւ հեւ ի հեւ, բայց զուարթադէմ:

— Կուգայ կոր, կուգայ կոր, ըսաւ:

— Ո՞վ, հարցուցին միարեարն Նա-Հիօ ու Վարդուհի, երկուքն ալ այլ յայլմէ եղած:

— Ինքը, Բէ-Հիւանը, խոհարարին խանութը տեսայ, աղւոր ճաշ մը կ'ապսպրէր. ձեռքն ալ շատ մը լապտերներ բռնած էր:

— Անկարելի է, կը սխալիս, գոչեց խեղճ Վարդուհի, որ իրեն համանուն ծաղիկէն աւելի վարդագոյն եղեր էր:

— Ձէ', չէ', ես եմ: Չուզեցի պարտականութեանս մէջ թերանալ, ու Անգլիայէն մասնաւորապէս կուգամ քեզի համբուրելու համար:

Բէ-Հիւան ներս մտեր էր, ետեւէն կուգային բեռնակիրներ, որոնք կարասեաց վրայ դրին ամէն տեսակ ծրարներ: Վարդուհի միայն ամուսինը կը տեսնէր. մինչդեռ ծերունին Նա-Հիօ ձեռները դէպ ի երկինք կը վերցնէր ի նշան երանութեան, դեռատի կինը ամուսնոյն գիրկը նետուեր էր:

Սրտի զեղման առաջին վայրկեանն անցնելով՝ իր զաւակը կը նոջն եղբայրն ու քոյրը համբուրելէ եւ բեռնակիրներու ստակը վճարելէ յետոյ, Բէ-Հիւան նշմարեց ծերունի գրագիրն՝ որ երթալու վրայ էր:

— Մի՛ երթաք, պատուական բարեկամս, գոչեց երիտասարդը դէպի Նա-Հիօ վազելով: Ձեր բարութեան շնորհիւն է որ հոս եմ: Լի-Ֆիւ-Չիուի գրողը դուք էք, այնպէս չէ՞:

Որովհետեւ Նա-Հիօ, բոլորովին չուարած ու շատ երջանիկ, անիմաստ բռներ կը թոթովէր:

— Տէրս ձեր նամակն ինձ կարդացուց, լսաւ Բէ-Հիւան, ու կը նոջն քով դառնալու արտօնութիւնը շնորհեց ինձ. . . սակայն մէկ պայմանով, ու այդ պայմանն ալ ձեռնէ կախում ունի:

— Ի՞նչ, իմ ամէնէն անուշ երազս գուշակեր էիր ու ինձ բան մը չէիր ըսեր, ո՞վ պատկառելի բարեկամս, ըսաւ Վարդուհի, Նա-Հիօի մօտենալով: Հիմա կը հասկնամ թէ՛ ինչո՞ւ այս երեկոյ դու ալ ինծի նման տխուր էիր:

— Այո՛, այս ազնիւ ծերունին, իմ տիրոջս գաստիարակը, ըսաւ Բէ-Հիւան խոնարհութեամբ ծռելով, տէրոջմէս խնդրեց որ զիս քովդ զրկէ. . . : Իշխանը հաճեցաւ, պայմանաւ:

— Պայմանա՞ւ, հարցուց Նա-Հիօ յուզեալ շեշտով մը:

— Որ պիտի հաճիք իրեն առաջին քարտուղարն ըլլալ: Տեսաք թէ այս մասին շատ դէշ կերպով կը ծառայուի, եւ թէ քարտուղարի մը պէտք ունի:

Բէ-Հիւան Նա-Հիօի յանձնեց անոր նախկին աշակերտի կողմէ նամակ մը՝ որ լի էր սիրազեղ զգացումներով եւ որով ազնուական երիտասարդը գաստիարակին կ'աղաչէր որ անգամ մ'ալ իր հրմտութիւնը իրեն շնորհէ:

Նա-Հիօ կրնա՞ր մերթել Բէ-Հիւանի տեղն անցնիլն, ո՛չ թէ իրրեւ սպասաւոր, այլ իրրեւ բարեկամ: Անգլիական դեսպանի

քարտուղարութիւնն ալ կրնա՞ր գոհուիլ հրապարակի դրագրութեան :

Բարեսիրտ ծերունւոյն երկիւղածութեամբ պահած գաղտնիքը իրեն համակ երջանկաբեր եղաւ , որովհետեւ ինքզինքը մոռնալով էր որ կրցաւ իր աշակերտին բարեկամութիւնը զարթուցանել :

Եթէ Բէ-Հիւան ու Վարդուհի այնուհետեւ Նակասաքիի ամէնէն երջանիկ ամուլը եղան , Նա-Հիօ , իրենց բարերարն ալ , իր երանութիւնը ունեցաւ :

— Ամբողջ կեանքիդ մէջ բարեգործութիւն ցանէ , անկասկած առնուշ ուրախութիւններ պիտի քաղես :

Ս Ե Ր Ը

ՊԱՆՏԻԿԻՆ (*)

Սերն աչերեմ քաղցի , անգուք կոյսին աչերեմ .

Մեկն էր ովկեան մը անհուն , միւսն երկինք անծիր ,

Բայց հայեացքներ պատրուկ ու ակնարկներ հրեղէն ,

Գայ անոնց մէջ միայն , ներա առջեւ ծնրադիր . . .

Մեկն էր ովկեան մը անհուն , միւսը երկինք մը անծիր ,

Բայց հո՛ն սերի ալեակներ չհեւացին , ո՛հ , իսպառ .

Ո՛չ ալ սերի ծիածան , սոսկ ակնարկներ սուս , պատիր ,

Ո՛հ , խենդ մ'էի ես , խենդ մը , խենդ սիրահար մ'անդադար :

Բայց հայեացքներ պատրուկ ու ակնարկներ հրեղէն ,

Խրլեցին սերն մայրիկիս , սերն իսկ անմահ Աստուծու ,

'Ներե՛' Աստուած , կոյսն սերն քեւ կեղծ էր բայց նորէն ,

'Ներա առջեւ ծնրադիր՝ գերի մ'էի ես անյոյս . . .

Գրսայ անոնց մէջ միայն կեղծն ու սուք ես յաւե ,

Ա՛հ , ներե՛ ինձ անուշ մա՛յր , ներե՛ , մի՛ լար իմ վրայ .

Իմ փոսիկիս մի՛ ձօնե՛ք փունջեր , ծաղիկ բուրաւե .

Սոսկ կտրիկ մը մարմար . . . մարմար է սիրսն ալ ներա . . .

Հիւսէյնիկ

ՄԱՆՆԻՕՆ

(*) Ռ. Էֆ. Պէրպէրեանի Աւագ կարգի աշակերտ , վաղամեռիկ Պ. Պաղտասար Պաղտիկեանի յիշատակին .

ՄԱՆԿԱԿԱՆ ՏՐԱՄԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ՊՋՏԻԿ ԱՂՋԻԿԸ ԵՒ ՊՋՏԻԿ ՄԱՌՐԱՅԿԱՆ ՄԸ

1. Պզտիկ աղջիկ մը, 8 տարեկան
2. Պզտիկ մուրացկան մը 6 տարեկան

Դպրոցին սրահը կը ներկայացնէ շատ պարզ նախասենեակ մը՝ որուն մէջսեղը սեղան մը կայ դրուած. պզտիկ աղջիկը կ'աշխատէ սեղանին վրայ հակած, շատ զբաղած կ'երեւայ, սեղանին ետ կայ կրակարան մը եւ արձուցնէ (Դուռը կը զարնուի) :

Պզտիկ աղջիկը. — (Յանկարծ ոտքի ելլելով) Ա՛հ, դուռը կը զարնեն: Զպիտի բանամ, որովհետեւ մայրս դուրս ելած է. բայց ո՞վ կրնայ ըլլալ սա զարնողը, նայիմ պատուհանէն (Պատուհանէն կը նայի ու կը վերադառնայ) Պզտիկ մուրացկան աղջիկ մըն է: Տասնոց մը նետեմ (զրպանները կը խուզարկէ) չա՛ր սատանայ, տասնոց մը անգամ չունիմ: Անձրեւն ալ չարտենակ կուգայ. նորէն դուռը կը զարնէ, մայրիկը զիս չյանդիմանէր, դուռը պիտի բանամ: (Դուռն կ'ելլէ ու կը վերադառնայ մուրացկանին թեւէն բռնած): Ա՛խ, որքա՛ն թրջուեր էք. կը մտիք. կրակին մօտեցէք, նստեցէ՛ք սա իմ պզտիկ աթոռիս վրայ ու տաքցէք: Ինչո՞ւ այս ատեն առանձին ննացեր էք փողոցին մէջ. ո՞ւր է ձեր մայրը:

Մուրացկանը (Դուռը ծռելով). — Ես մայր չունիմ:

Պզտիկ աղջիկը. — Եւ ձեր հայրը, միթէ անիկա ձեզ չի՞ նայիր:

Մուրացկանը. — Հայրս հիւանդ պառկած է անկողինին մէջ, չի՛ կրնար աշխատիլ:

Պզտիկ աղջիկը. — Դպրոց չէ՞ք երթար:

Մուրացկան. — Կ'ամչնամ երթալու. կօշիկ չունիմ եւ չըջագգեստս պատռտած է. ասկէ զատ կրնամ հայրս առանձին ձգել:

Պզտիկ աղջիկը. — Խեղճ աղջիկ, որքա՛ն կարմրեր են իր ոտքերը. ո՞վ գիտէ որքան նեղութիւն կրեցիք քարերուն վրայէն քալելու ատեն: Սպասեցէք հոս, հիմա ձեզի իմ կօշիկներէս զոյգ մը պիտի բերեմ: (Դուռն կ'ելլէ ու զոյգ մը կօշիկ առած կը վերադառնայ): Առէ՛ք, գիտեմ որ մայրիկս այս ըրածիս համար չպիտի բարկանայ:

Մուրացկանը (ձեռքերը իրարու կցելով). — Ո՛հ, շնորհակալ

եմ, գտնէ պիտի կրնամ հանգիստ քաշել հիմա, հայրս ալ շատ ուրախ պիտի ըլլայ: Եթէի գիշեր ճատ տխուր էր ու քանի մ'անգամ կրկնեց: «Ինչ թշուառութիւնն է խեղճ պղտիկս, անկարող եմ քեզի կօշիկ գնել: Ա՛խ, որչա՛մ քիչ արհեստ քան է հիւանդ եւ աղքատ ըլլալ ու տեճենի որ իր զաւակը կը տառապի:»

Պզտիկ աղջիկը. — Իմ մայրիկս շատ բաւի է: Ինչ բանի մը պիտի ունենամ կուտայ ինծի:

Մութացկանը. — Բայց հապա եթէ հիանդէ ըլլայ եւ ստա՞կ ալ չունենայ:

Պզտիկ աղջիկը. — Իրաւ է: Ես երբեք աչդ բանին վրայ մտածած չեմ:

Մութացկանը. — Ա՛խ. եթէ հայրս բժշկուի, եւ ոտքի կարենայ ելնել, այն ատեն քիչ մը ստակ կ'ունենանք: Ինծի չըջաղ-գեստ մը ու կօշիկներ կը գնէ ու միւս աղջիկներուն պէս կը հագոսիմ ու դպրոց կ'երթամ:

Պզտիկ աղջիկը. — Ձեր հայրը նայելու համար, բժիշկը չեկա՞ւ ձեզի:

Մութացկանը. — Ո՛չ, երբ հայրս տակաւին ոտքի վրայ հիւանդ էր, չուզեց ինքզինքը բժիշկին ցուցնել, բռնով թէ հիւանդութիւնն ինքնիրեն կ'անցնի, ու երբ ստիպուեցաւ անկողին պառկիլ ըսաւ ինծի. «Աղջիկս, ինչ բանի պիտի ծառայէր բժիշկը կանչելնիս, քանի որ դեղերը գնելու ստակ չունէինք:»

Պզտիկ աղջիկը. — Ի՞նչ, միթէ դուք ձեր տունին մէջ ստակի պահարան չունի՞ք: Բայց ամէն մարդ ունի եւ պէտք է որ ունենայ, տունին պէտք եղած բաները շուկայէն գնելու համար. մայրիկս միշտ կ'ըսէ թէ առանց ստակի բան մը կարելի չէ ընել: Դուք ինչպէ՞ս կ'ընէք ուրեմն:

Մութացկանը. — Շախ ըսեմ թէ մեր տունին մէջ ստակի պահարան չունինք: Մեղան մը միայն կայ, անկողին մը եւ երկու աթոռներ: Սեղանին գզրոցին մէջ քանի մը մանր մուկն դրամներ կային: Այդ դրամներով հաց կը գնէի հայրիկս հիւանդանալէն ի վեր, բայց այսօր գզրոցին մէջ բան չէր մնացեր, ուստի դուրս ելայ (գլուխը կը կախէ աւ երեսը գոցէ՝ ձեռներով) անցորդներէն հաց մուրալու համար:

Պզտիկ աղջիկը. — Խեղճ աղջիկ. ուրեմն տակաւին հաց չէ՞ք գնած, քանի որ մեր դուռին առջեւ կեցաք անձրեւին պատճառով:

Մութացկանը. — Չէի համարձակեր բարձր ձայնով խնդրելու. մէկը ինծի ուշադրութիւն չէր ըներ. շուտ շուտ քովէս կ'անց-

նէին. անձրեւն ալ սկսաւ. վախցայ ու ձեր դուռը զարկի...
Երէկուրն է ի վեր բան մը չեմ դրած բերանս:

Պզտիկ աղջիկը. — Ա՛խ Աստուած իմ, եթէ մայրիկս հոս ըլ-
լար: Սպասեցէ՛ք հոս, հիմա ձեզի հաց պիտի բերեմ:

Մուրացկանը (թելին վրայ կը դնէ գլուխը եւ յոգնած ձայնով
մը). — Որչա՛փ յոգնած եմ:

Պզտիկ աղջիկը (կը վերադառնայ հետը բերելով հացի մեծկակ
կտոր մը՝ զոր ձեռքովը կտրել կը փորձէ). — Առէ՛ք, չեմ կրնար կոր
կտրել հացը, ուզածնուդ չափ կ'երէք. առէ՛ք, առէք... լաւ կը
յիշեմ թէ տասնոց մըն ալ պիտի ունենամ. բայց ուր դրեր եմ,
չե՛մ յիշեր: Մայրիկս կ'իրակի օրը առաւ ինծի պատկեր գնելու
համար. փնաս չունի ուրիշ տտէն մի կը գնեմ: (Կը մտածէ) տես-
նենք, կարծեմ թէ հոս տուփիս մէջն է (տուփին մէջ կը փնտռէ)
Ահա ապիկ, առէք, հիմա այս ստա՛յով կրնաք ձեր հօրն ալ քիչ
մը հաց տանիլ ես այս ստակը միայն ունիմ ու զայն ձեզի կու
տամ:

Մուրացկանը (հացի կտորն ուտելէ յետոյ) շնորհակալ եմ, որչափ
համով էր այս հացը (դիտելով ոտի կօշիկներն ու ձեռքին մէջի
սասնոցը) հայրիկս որչափ պիտի ուրախանայ:

Պզտիկ աղջիկը. — Շուտ տուն գացէ՛ք ձեր հօր քով, ես ալ
մայրիկս պիտի սպասեմ ու պիտի պատմեմ իրեն ինչ որ ըրի ա-
նոր բացակայութեանը. մայրիկէս բան մը չե՛մ պահեր: Պիտի
աղաչեմ իրեն որ ձեզ տեսնելու գայ ու զիս ալ միասին առնէ.
ո՛ւր կը բնակիք դուք:

Մուրացկանը. — Մեր տունը ասկէ շատ հեռու չէ. ձեր փողո-
ցին անկիւնը գտնուած նեղ փողոցին մէջն է. մեր տունը լապ-
տերին ճիշտ տակն է. հոն ուրիշ տուն չկայ:

Պզտիկ աղջիկը. — Շատ լաւ, միտքս պիտի պահեմ ու ես
պիտի առաջնորդեմ մայրիկս:

Մուրացկանը. — Արդեօք ձեր մայրը պիտի գիտնա՞յ թէ հայրս
բժշկելու համար ինչ պէտք է:

Պզտիկ աղջիկը. — Մայրիկս ամէն բան կրնայ ընել. որովհետեւ
շատ բարի է. ապահով եմ որ բժիշկ պիտի զրկէ ու պէտք եղած
դեղերն ալ պիտի առնէ:

Մուրացկանը. — Ուրեմն ձեր մայրը շատ հարուստ է:

Պզտիկ աղջիկը. — Ո՛չ, չեմ կարծեր, բայց մայրիկս միշտ կ'ըսէ
թէ բարիք ընելու համար մարդ անպատճառ հարուստ պէտք չէ
ըլլայ:

Մուրացիանը (գարմացած) — Ջարմանալի բան, ես այսպէս կը կարծէի թէ հարուստները միայն բարիք կ'ընեն:

Պզտիկ աղջիկը. — Ոչ, ոչ, մայրս միշտ կ'ըսէ թէ ամէն մարդ կրնայ ու պարտականութիւն ալ ունի ուրիշին բարիք ընել: Տըրուած ողորմութիւնը այն ատեն միայն ընդունելի կ'ըլլայ՝ երբ սիրտին բղխի: Պէտք չէ մոռնալ թէ Յիսուսի աչքը՝ հարուստներուն տուած ոսկիներուն մէջ, տեսաւ աղքատ կնկան ջնջին լուման:

Թարգմ. Տ. ՏԵՓԱՆԵԱՆ

Սոյն տրամախօսութիւնն արդէն տպուած էր, երբ Հանրագիտակի գլխաւոր աշխատակիցներէն, Հայկազուն էֆ. Խանդամարէ ստացանք կաղանդի առթիւ գրուած սիրուն տրամախօսութիւն մը, բայց բաւական երկար ըլլալուն, գալ տարւոյ սկիզբէն հրատարակել որոշեցինք:

ԳԻՏԱԿԱՆ ԷԶԵՐ

ՄԱՐՄԻՆ ՄԸ ՈՐՈՒ ՕԽԱՆ ՄԷԿ ՈՒ ԿԷՍ ՄԻԼԻՈՆ ՕՍՄ. ՈՍԿԻ Է

Երեւակայեցէք մարմին մը որ մշտնջենապէս կ'այրի՝ առանց հատնելու, կանթեղ մը՝ որ յաւիտենական լոյս կը սփռէ և պէտք չկայ որ մէջը իւղ կամ բէթրօլ լեցնէք: Ջարմանալի չթուի՞ր ձեզի՝ սակայն իրօք գոյութիւն ունի այդ մարմինը, գիտունները գտած են զայն, Ռասիումն է ադ:

Քիչ չատ բնալուծութիւն կարդացողներ, գուցէ ըսեն թէ նոր բան մը չէ այդ, քանի որ դասագրքերու մէջ իսկ անցած է, ի շարս պարզ մարմիններուն, Ռօսիումը: Կը խնդրենք մեր ընթերցողներէն որ չչփոթեն այս երկու մարմինները, որոնք թէև գիրի մը տարբերութիւնը միայն ունին, սակայն իրարմէ անհունապէս հեռի են արժէքով, Ռօսիումը անպէտ մարմին մըն է, որ պարզ մարմիններու ցանկը աւելցնելէ զատ ուրիշ բանի չի ծառայեր, մինչդեռ Ռասիումը՝ անանկ յատկութիւններ ունի որոնք հիանալի են:

Այսօր ամէն մարդ գիտէ Ք. ճառագայթներուն ինչ ըլլալը. կարգ մը մեքենաներու ձեռքով կարելի է յառաջ բերել ատոնք՝

որ մինչեւ հիմա անթափանցելի կարծուած մարմիններու մէջէն անցնելով՝ զանոնք թափանցիկ կ'ընեն : Արդ, Ռասիօմի արձակած ճառագայթները միեւնոյն գործը կը կատարեն, առանց ու եւ մեքենական կազմածի պէտք ունենալու, կարող էք տեսնել այդ ճառագայթները նոյն իսկ աչքերնիդ գոց. թարթիչներէ ներս ալ կը թափանցեն :

Մինակ այս չէ Ռասիօմի զարմանալիքներու մէջ զարմանալի յատկութիւնը : Եթէ երբէք յաջողիք ձեռք ձգել — բան մը որ բարեբաղդարար անկարելի է, ինչպէս քիչ մը ետքը պիտի բացատրենք — Ռասիօմի ամենափոքր հիւլէ մը, չըլլայ որ զրպաննիդ պահէք : Պ. Հ. Պէքրէլ, անգամ մը բաճկոնակին գրպանը դրաւ մէկ տասնորդակրամ պարիօմի քլօրուկ պարունակող ապակիէ շիշ մը : Տասը ժամ ետքը կուրծքին վրայ այրուցք մը յառաջ եկաւ որ հազիւ մէկուկէս ամիսէն կարելի եղաւ բժշկել : Միեւնոյն բանը դիտած է նաեւ տիկին Քիւրրի, որ ամուսինին ընկերակցութեամբ Ռասիօմի գտած է :

Եթէ իր բաղադրութեանը մէջ Ռասիօմ ունեցող մարմին մը, ուրիշ սովորական մարմիններու քովը ձգենք փակ տեղ մը, զարմանքով պիտի տեսնենք որ այս վերջիններէն ալ չինքնին լուսաւոր մարմիններ կ'ըլլան : Երկու ապակիէ գունդեր առնենք, որոնք բոլորովին գոց են և իրարու հետ միայն կը հաղորդակցին խողովակով մը : Մէկուն մէջ դնենք Ռասիօմի քլօրուկ, իսկ միւսին մէջ՝ գէնկի ծծմբուկ և երկու գնդիկներն ալ մութ տեղ մը պահենք : չափ չանցած պիտի տեսնենք որ գէնկի ծծմբուկն ալ, զայն պարունակող ապակիէ գունդն ալ լուսավառիկ կ'սկսին : Եթէ երկու ապակեայ գոցերը իրարմէ անջատենք, գէնկի ծծմբուկը կամաց կամաց կը կորսնցնէ իր փայլը :

Ասոնցմէ ալ զարմանալին կայ : Ռասիօմի վրայ կատարուած նորագոյն փորձեր տարօրինակ մէկ յատկութիւնը կը մատնանշեն այդ մարմինին : Պարոն Ժօրժ Բլօն գորտի հաւկիթներ դրաւ աման մը ջուրի մէջ և այդ ջուրին երեսն ալ ձգեց քանի մը հարիւրակրամ Ռասիօմի պրօմիւր պարունակող ապակեայ խողովակ մը : Այդ հաւկիթներէն յառաջ եկած շերտիւկները ճիւղալային մեծութիւն մը ունէին : Միեւնոյն պայմաններուն մէջ յառաջ եկած թոթոշի շերտիւկները սովորականէն շատ աւելի մանր էին : Ըսել է կարելի պիտի ըլլայ ազագային հրէշ կենդանիներ պատրաստել միմիայն Ռասիօմի արձակած ճառագայթներուն ազդեցութեան տակ :

Պէքրէլ բնագէտը, արդէն ցուցուցած էր թէ կարգ մը մար-

միններ, ինչպէս իւրանիօմը. ճառագայթներ կ'արձակեն որոնք անթափանց մարմիններէ կ'անցնին և կարող են փոսփորափայլում յառաջ բերել: Պարոն եւ տիկին Բիւրրի, նշանաւոր քիմիագէտ աֆօլը, իւրանիօմի այդ յատկութիւնները քննած ատեննին իւրանի թթուուկին մէջ երկու նոր մարմիններգտան Բօլօնիօմ և Ռասիօմ: Հազարներով քիօկրամ իւրանի թթուուկի հանածոյներու մէջէն երկար ու մանրակրկիտ գործողութիւններէ վերջ կարելի եղաւ գտել քանի մը տասնորդակրամ Ռասիօմ: Ժիշտ երկու տասնորդակրամ Ռասիօմ հանելու համար մէկ թօնօ (1000 քիլօ) այդ հանածոյէն գործածեցին և 10,000 ֆրանք ծախք ըրին, որով մեր չափական հաշիւներով խօսելով, մէկ օխա Ռասիօմի գինը եղաւ 1,672,241 օսմանեան ոսկի:

Պր. և Տիկին Բիւրրի կը հաւաստեն թէ, Ռասիօմի արձակած լոյսովը կարելի է գիշեր ատեն կարդալ: Եթէ երբեք կերպ մը գտնուի տարբեր միջոցներով Ռասիօմ պատրաստել խիստ աժան գինով մը՝ յարմար աղքատիկ քսակներու, ա'լ այն ատեն ո՞վ կը խորհի թէ բէթօլին գինը բարձրացեր է կամ հանդաժուխը սղեր է. սենեակներուն պատերը Ռասիօմով կը ներկեն եւ գիշեր ցերեկ կ'ունենան պայծառ լոյսով, միշտ տաքուկ բնակարաններ:

Զ. Շ. Պէրդէրեմն

ԳԹԱՍՐՏՈՒԹԻՒՆ

Տարւոյն վերջը կը մօտենայ, եւ նոր տարին պիտի սկսի քիչ օրէն: Պէտք է գիտնանք որ ժամանակը տարիներու, ամիսներու, օրերու եւ ժամերու անընդհատ յաջորդութիւն մըն է, եւ ասոնց ամբողջութիւնը կը կազմէ մարդուն կեանքը, եւ երբ որ մարդս իր ժամանակին մէկ մասը կը կորսնցնէ՝ իր կենաց մէկ մասն ալ կորսնցուցած կ'ըլլայ: Եւ ա'յն մարդն՝ որ իր տարիներն ծուլութեան եւ դատարկութեան մէջ կ'անցընէ, չի կրնար ըսուիլ թէ՛ մարդկային կեանք կը վարէ, այլ միայն անասունի պէս կ'ապրի կամ տունկերու պէս կ'աճի: Ո՞վ որ իր ժամանակը երբեմն լաւ կը գործածէ, կամ գէշ կը գործածէ, կենացը մինակ մէկ մասն ըստ պատշաճի ապրած կ'ըլլայ: Իր ամբողջ ժամանակն օգտակար եղանակով գործածողն է որ կատարեալ կը վայելէ իր կեանքը:

Տիտոս՝ երբ իրիկունը նոյն օրուան մէջ կատարած գործերուն վրայ չ'աւանդելով՝ կը տեսնէր որ մէկու մը բարիք չէ՛ ըրած, տրամութեամբ ու ցաւով կ'ըսէր. «օր մը կորսնցուցի»: Պէտք է



ԳՈՒԹ ԵՒ ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆ

սոյն կներեալոր ճշմարտութիւնը մտքերնուս մէջ հաստատենք եւ ամէն իրիկուն բոլոր օրուան ամէն մէկ ժամերն աչքերնուս առջեւ բերեն: Բարէ՛, որքան պարապ անցուցած ժամեր կը գտնենք, որքա՛ն կորսուած ժամանակ աչքերնուս առջեւ կը պարզուի: Այն պարապ անցուցած ժամերնիս, մեր գոյութենէն, կեանքէն պակսած մասոննքներ են, գողցուած անգին մարգարիտներ, որոնց կորստեան վրայ որքա՛ն ցաւինք, այնքան արժանի է, որովհետեւ աննորոգելի է. եւ տեղը չենք կրնար լեցնել: «Ափսո՛ս իմ տըղայութեանս ժամանակը, վա՛յ իմ երիտասարդութեանս ժամանակը, զոր անմտութեամբ կորսնցուցի» կը գոչէր հին իմաստուն փիլիսոփայ մը:

Պէտք է ջանանք որ մեր տարիքն առնելէ յետոյ սոյն ցաւը չունենանք, որ բոլորովին անօգուտ է: Պէտք է նայինք որ օգտակար աշխատութիւններով, առաքինական գործերով անցնենք մեր ժամանակն:

Ահա՛, մեր կեանքի տեւողութենէն տարի մ'ալ սահելու վրայ է, արդեօք մեր այս օրերն ի՛նչպէս անցուցինք: Աշխարհիս մէջ ամէն մարդ միեւնոյն վիճակին մէջ չի ծնիր: Աստուած՝ հարուստ ու կարողութիւն ունեցողն աղքատին քովիկը դրած է, որպէս զի իր կարողութեան չափով անոր օգնէ: Նախախնամութիւնն՝ իբրեւ դժած մայր՝ զամէնքն ալ կը հոգայ, բայց միեւնոյն կերպով չի խնամէր: Իր բարիքները ոմանց առատօրէն տալով՝ իրենց կը յանձնէ, որ քիչ ունեցողներուն բաշխեն, ուստի հարուստը նախախնամութեան գործիքն է, և միայն այս նկատմամբ երջանիկ է, վասն զի շատ բարիք կրնայ ընել, տալն աւելի աղէկ է՝ քան թէ առնուլն, և տուողն ալ առնողէն աւելի երջանիկ է, որովհետեւ Աստուծոյ տեղ կը բռնէ:


Տեսէ՛ք, որքան դիւրին բան է, բարիք մը ընելն և ուրիշին ուրախութեան պատճառ ըլլալն: Քեզի աւելորդ եւ կամ պզտիկ եկած զգեստներն դրացւոյն տղեկին տալով՝ որքա՛ն երջանիկ ըրիր զանի, և դուն սրտիտ մէջ անոր երջանկութեան հազորդակից եղար, որչափ անգամ որ խեղճ տղուն վրայ քու տուած զգեստդ կը տեսնես, որքան ինք իր շնորհակալութիւնը քեզի յայտնէ. դու ալ այնչափ ներքին միտմտութիւն մը կ'զգաս: Ինք ամէն անգամ նոյն զգեստն հագած ու հանած ատեն իր բարեւարը կը յիշէ և քու յիշատակդ կ'օրհնէ:

Փոքրիկ ընթերցողներս, ձեր ծնողքներէն նուէր առած հինգ կամ տասը փառանոցները գիտէ՛ք ինչ բարութեան գործիքներ կրնար ըլլալ, կը տեսնէք Մանգումի սիւնակները, որ ամէն օր

պտլիկ նուիրատուներու անուններով կը լեցուին, ոմանք մէկ, ոմանք երկու կամ հինգ զրշ. կը նուիրեն իրենց հասակակից աղքատիկ տղեկներուն՝ կազանդին օրը պտուղներ, շաքարեղէններ տրուելու համար:


Արդեօք մտքերնուդ կ'անցնէ՞ք թէ՛ ձեզի նման այդ պտլիկները՝ շաքարեղէն մը, ընկոյզ մը, կաղին մը՝ կերած ատեննին պիտի յիշեն ձեզի, և հոգեկան ուրախութիւն մը պիտի զգան իրենց փոքրիկ սրտերնուն մէջ:

Ջանացէ՛ք, սիրելի ընթերցողներս, պզտիկ հասակէն վարժուիլ՝ ձեր ձեռքէն եկած չափովն օգնել՝ աղքատին, տնանկին, և ա՛յս պիտի ըլլայ ձեր յաւիտենական վարձքն, և երբ ա՛լ մեծնաք, ծերանա՛ք, մազերնիդ մօրուքնիդ ճերմկնայ, չի զղջաք թէ՛ ժամանակնիդ պարապ անցուցեր էք:



ԶՈՒԱՐՃԱԼԻՔ


Ուսումնասէր մարդ մը իր տղան քովը նստեցունելով՝ «Տղաս, ուսմունք սորվելու համար ինչո՞ւ չես աշխատիր. այս ծուլութեամբդ ապագադ ի՞նչ պիտի ըլլայ. ընկերներէդ ետ մնացած ես, չե՞ս ամչնար»: Ուրիշ ասոր նման խել մը խրատներ կուտար: Տղան ձեռքը գտնուած փոքրիկ ոսկորի մը ծակէն նայելով՝ «Հայրի՛կ, այս ծակէն քեզի կը տեսնեմ» կ'ըսէ:



Դպրոցի քննութեան մը մէջ.

ՔՅԵԻՅ մը. — Կիւսթավոս Ատուլֆոս իւր ո՞ր պատերազմին մէջ մեռաւ:

Աւակեօր. — Կարծեմ իր վերջին պատերազմին մէջ:



Մանկական միամտութիւն.

Պզտիկ տղայ մը իր հօրը կը հարցնէ.

— Հայրի՛կ, ինչպէ՞ս կ'ըլլայ ուր, երբ կրակին փչենք կը վառի, երբ մոմին փչենք կը մարի:

ԳԻՏԱԿԱՆ ՋՐՕՍԱՆՔ

Գ Լ ՈՒ Խ Ը Պ Ա Տ Ի Ն

Ահա՛ դիւրին երեւցող, բայց անկարելի փորձ մը: Պատին առջեւ աթոռակ մը դրէք և անոր լայնութեան կրկին հեռաւորութեամբը կայնեցէք: յետոյ գլուխնիդ հետզհետէ խոնարհեցուցէք ու աթոռակը երկու կողմերէն բռնեցէք: այս կերպով գլուխնիդ պատին կը թնցուցէք: Այդ, աթոռակը գետնէն կամաց կամաց վեր առէք և առանց ջնջման՝ կրկին կանքուն կեցէք, — շտկուեցէ՛ք — կամ գոնէ փորձեցէք. անկարելի՛ է:

Այս փորձը ողորկ և սահուն տախտակամածի վրայ ընելու չէ, այլ գորգի վրայ, որպէս զի եթէ իյնաք՝ հետեւանքը գէշ չըլլայ: Ահա դիւրին երեւցող՝ բայց անկարելի փորձ մը, որուն մէջ մարմնոյ ծանրութեան կեդրոնի տեղափոխութեան մէկ հետաքրքրաշարժ արդիւնքը կը տեսնուի, և որով գրեթէ անկարելի կ'ըլլայ նորէն շտկուիլ, բայց եթէ աթոռակը գետինը ձգէք՝ վերստին կրնաք ստանալ յենակէտը որ հարկաւոր է կանգնելու համար, բայց աթոռակը ձեռքը անկարելի է շտկուիլ:



Ահաւասիկ ուրիշ հետաքրքրաշարժ փորձ մ'ալ, որ թէեւ առջի բերան շատ դիւրին կ'երեւի, բայց վերոյիշեալին պէս անկարելի է:

Առէք սիկարի թուղթ մը և քիչ մը ծխախոտ, անցէք հայելիի մը դիմաց և անոր մէջը նայելով՝ սիկարը շինել սկսեցէք: Անկարելի՛ է որ սիկառը շինել կարողանաք:

ՆԱԽԱԿԱՏՈՒՓ ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ

Հիմնի ՄԱՆՍՈՒՐ . — 1. էֆ. Գ. Կրնար բոսնայի բուլ զրկել ապահովագրուած նամակի մէջ:

ՏԻԱՐՊԷԻՐ . — Մ. էֆ. Պ. Աղօթագիրքը չենք զրկած, տեղը ուրիշ գիրք մը ուզեցէք: Տարեցոյցները զրկուեցաւ: Մ. էֆ. Գ.ի հասցէն ճիշդ գրուած է ծեղ:

ԱՄԱՍԻԱ . — 2. էֆ. Խ. Ձեր յիշած նամակը չենք ստացած, որով չի կրցինք ձեռն յանձնարարութիւնները տպել:

Տպագրիչ եւ Հրատարակիչ ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ ԵՒ ՈՐԴԻ

ՊԵՐՍ, ՊԱՊԸ ԱՆԻ ՀԱՏՏԷՍԻ, ԹԻԻ 38. ԻՎՏԱՄ ԼԵԱԳՐԻ ԴԷՄ

Գաւառները գլխաւոր քաղաքներու մէջ ընդհանուր ներկայացուցիչներ ունի տպարանս, որոնց կրնան դիմել տպագրական ամէն տեսակ գործեր ունեցող, եւ կամ ո՛ր եւ է գրքի մը պէտք ունեցողները, եւ փոխարժէքն անոր վճարելով, կ'ընդունին ապսպրանքները: Այս միջոցով իրենք կ'ազատին թէ՛ աւելորդ ծախսերէ եւ թէ՛ նամակի եւ այլ կորուստներէ. եւ ի՛նչ որ ամէնէն կարեւորն է, փոքր գումարներու փոխադրութեան համար յառաջ եկած դժուարութիւններէն ու հոգերէն կ'ազատին:

Գաւառներու մէջ Հանրագիտակի Մեծ. Գործակալներու դիմողները կրնան սա առաւելութիւնն ալ վայելել որ, թէ՛ իրենց յանձնարարութիւնները կէտ առ կէտ կը կատարուին ամենակարճ ժամանակի մէջ եւ թէ՛ միշտ վստահելի անձնաւորութիւն մը կ'ունենան իրենց մօտ պատասխանատու ամէն առթիւ:

Օրինակի համար, եթէ Ամասիայի կամ շրջականերէն մէկն ուզէ ժողովրդական Տարեցոյց մը գնել, Հանրագիտակի բաժանորդագրուիլ, այցաքարթ մը, նամակի անթէթներ, փոխանակագրի տետրակներ, ինչպէս նաեւ զանազան հեղինակներու պատկանող գրքերէն ուն նալ, փոխանակ չորս հինգ տեղեր նամակ գրելու, աւելի լաւ կ'ընէ եթէ դիմէ ուղղակի Մեծ. Հայկազուն էֆ. Խանդավորի եւ տասը վայրկեանի տեսակցութեան մը մէջ ամէն ուզածը յայտնելէ վերջ հանդարտօրէն իր գործին նայի, վստահ ըլլալով որ իր յանձնարարութիւնները կէտ առ կէտ եւ կարելի եղածին չափ փութով կը կատարուին եւ իրեն կը յանձնուին Մեծ. Հայկազուն էֆ. Խանդավորի միջոցաւ:

Այս կերպով գրենական ու տպագրական գործերու մէջ ամէն ատեսակ դիւրութիւն կրնան վայելել անոնք որ մեր ներկայացուցիչ ունեցած քաղաքներու մէջ կամ անոնց շրջակայները կը գտնուին:

Մեր Մեծ. Գործակալներուն և Հանրագիտակի բաժանորդագրութեան պայմաններու մասին տեսէք կողքին վրայ:

ԽՐԱԳՐԱՊԵՏ-ԱՐՏՕՆԱՏԷՐ

ՏՊԱԳՐԻՉ-ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԵՑԱԻ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏԱՐԵՑՈՅՑ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆԻ

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏՈՐԻ

Ամէնէն ժողովրդական, Ամէնէն Զուարճալի

Ե Ի

ԱՄԷՆԷՆ ՇԱՏ ԾԱԽՈՒԱԾ ԸՆԴԱՐՁԱԿ ՕՐԱՅՈՅՅՐ

ԿԸ ՊԱՐՈՒՆԱԿԷ

Ի՞նչ է Քօնտերը. — Ագահութիւն. — Պարսեանդէտը ի՞նչ տարի առաջ
(Քանագող լուսիւնեան). — Հագարումէկ կերպեր ժամը գիւնալու. —
Պատմութիւն մը. — Աշխարհիս վախճանը. — Թէ ինչու եւ չեմ յա-
ջողի (Քասիմ). — Հարց-Պատասխան (Յ. Հանեան). — Անխտեմ հար-
ցումներ, Կնոջ հարցումներ (Ա. Փանոսեան). — Տիկին Մ'աբ Ալիբեմս
եւ կայծակը. — Քսան եւ ... դարու հաշ մը. — Կրօններս պատմու-
րիւնը. — Այծեամի որսը. — Հաբոյի մը պատրանք (Քասիմ). — Աշ-
խարհիս վրայ միայն կենալու անդ. — Նշանաւոր միտկանիներ. —
Մխիթարական բազմ յոռետես բարեկամիս (Քասիմ). — Երկրագործա-
կան Պատառիկներ. — Օգտակար գիտելիքներ. — Յաւին դարձանք. —
Աշխարհիս նախնական վիճակները. — Աչկերու առողջութիւնը. — Ա-
կամայ գիւղացի (Յ. Պարոնեան). — Ժամացոյց մը զոնեղ պարտնք. —
Տոմարակնիդ, պարոնայի. — Հինգ առ հարիւր տոկոս. — Նամակա-
դրոշմի լեզուն. — Զուարճալի դատաստան. — Թօթօ. — Գորնիշոնի
երազը. — Մեղրալուսնի նախքորդութիւն. — Մայր ու աղայ. —
ԱԿՆՑԻ ՍԱՐԱՅ ՄԷ. — Դիւղերու համար. — Դրամագլուխ եւ
Աշխատութիւն. — Կնուսեմին. — Քսան բարայով աշխարհիս ոսկին.
— ԹԻՐԸՍԹՆԵՐԸ. — Ծխախոտի մշակութիւնը. — Հարկաբար Սաւած-
ներ ու ԶՈՒԱՐՃԱԼԻՔՆԵՐ եւայլն, եւայլն.

Գինն է 5 Դանեկան. — Գաւառներ՝ թղթատու 6 Դանեկան

Հանրագիտակի բոլոր Գործակալներու հով

Ուղղակի մենէ հինգ հաւ զնոգներուն վեցերորդ մը նուէր կը տուի

